

ՄԵԼԻԲ ՄԵԼԻԲՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ*

MELIK MELIKYAN

*Leading specialist of the Department of Legal Expertise of the
Cassation court of the RA*

МЕЛИК МЕЛИКЯН

Ведущий специалист Службы правовой экспертизы Кассационного суда РА

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**SOME ISSUES RELATED TO THE APPOINTMENT AND
EXECUTION OF EXPERTISE IN
RA CRIMINAL PROCEDURE**

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НАЗНАЧЕНИЯ И ВЫПОЛНЕНИЯ
ЭКСПЕРТИЗЫ В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА**

Փորձագետի եզրակացությունը՝ քրեական դատավարությունում որպես թույլատրելի ապացույցի առանձին տեսակ, որոշակի դեպքերում հարաբերվելով արվեստի, զանազան ոլորտների, գիտության տարբեր ճյուղերի հատուկ մասնագիտական գիտելիքների հետ, պահանջում է այն նշանակելու և անցկացնելու պատշաճ իրավական ընթացակարգերի խստորեն պահպանում:

Փորձաքննության իրավական նշանակության և գիտության տարբեր ճյուղերի հատուկ մասնագիտական գիտելիքների հարբարակցության վերաբերյալ դրկտրինալ կարծիքները տարբեր են:

1. Գիտնականների մի մասը տեսակետ է հայտնել այն մասին, որ փորձաքննությունն իրենից ներկայացնում է գիտական հետազոտությունների գործընթաց¹:

2. Տեսաբանների մեկ այլ խումբ նշել է, որ փորձաքննությունը պրակտիկ գործունեություն է²:

3. Մի խումբ գիտնականներ միավորելով նշված մոտեցումները՝ ձևավորել են այն մոտեցումը, ըստ որի՝ փորձաքննությունը գիտապրակտիկ գործունեություն է³:

¹ Տե՛ս Երմոլենկո Բ.Ս., Օ. Судебной экспертизе как процессе научного познания, Криминалистика и судебная, Респ. междедомств. науч.-метод. сб., Вып. 12, Киев, 1976, էջ 58:

² Տե՛ս Шапронов Ю.И., Предмет судебной экспертизы, Сб. науч.тр. ВНИИСЭ, М.,1989, էջ 185:

³ Տե՛ս Лисиченко В.К., Использование данных естественных и технических наук в следственной и

Չնայած վերը նշված մոտեցումային տարբերություններին, աներկբա է այն հանգամանքը, որ փորձագետի եզրակացության նշանակությունը քրեական վարույթի ընթացում ձեռք բերված ապացույցների հետազոտման և դրա հիման վրա պատճառաբանված եզրահանգման գալու կոնտեքստում ունի հիմնարար նշանակություն, և զուր չէ, որ որոշ երկրներում փորձագիտական եզրակացության ապացուցողական բնույթը շեշտադրելու համար օգտագործվում են նաև «expert evidence», «forensic evidence», «scientific evidence» տերմինները⁴:

Նախորդ պարբերությամբ նշվածի մասին է վկայում նաև դատական պրակտիկան:

«Վճռաբեկ դատարանը Ա. Խաչատրյանի վերաբերյալ որոշմամբ նշել է հետևյալը.

(...) Փորձագետի եզրակացությունն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Մասնավորապես՝ «քրեական դատավարության օրենսգրքի 250-252-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալու հետազոտության էությունը և պարզաճ գնահատելու դրա արդյունքները: Միևնույն ժամանակ, այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմինն օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը (...)»⁵:

Փորձագետի եզրակացությունը հաճախ մրցակցության մեջ է մտնում գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների հետ և իրավական որոշակիություն ապահովելու, ընդհուպ մինչև անձի պատժի ու պատասխանատվության հարցերի համատեքստում՝ որակական առումով կարող է գերակայել գործով ձեռք բերված այլ ապացույցներին:

«Վերաքննիչ քրեական դատարանը թիվ ՍԴ/0003/01/19 քրեական գործով կայացված որոշմամբ դիրքորոշում է արտահայտել հետևյալի մասին. «(...) Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդումներին, որ դատարանը որևէ կերպ չի ան-

судебной практике, Учебное пособие, Киев, Вища школа, 1979, էջ 85:

⁴ Sten Gianneli P. C., Imwinkelried E. J., Scientific evidence, Virginia, 1986, էջեր 149-174:

⁵ Տես «Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի՝ Ա. Խաչատրյանի վերաբերյալ թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման 15.1-ին կետը:

դրադարձել այն հանգամանքին, որ ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է հանցանքն ալկոհոլի ազդեցության փակ կատարելը, որը հաստատվել է նախաքննության ընթացքում ձեռք բերված մի շարք վկաների և ամբաստանյալի ցուցմունքներով, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև առաջադրված մեղադրանքում նշված է, որ Մայիս Դարբինյանը գտնվել է ալկոհոլ օգտագործած՝ ոչ սթափ վիճակում, այնուամենայնիվ՝ քրեական գործում առկա 2018 թվականի հուլիսի 23-ի թիվ 306 փորձագետի եզրակացության համաձայն՝ Մայիս Դարբինյանից վերցված արյան փորձանմուշում ալկոհոլ չի հայտնաբերվել: Նշված պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը նշվածն իրավաչափորեն չի արձանագրել որպես քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Ավելին՝ րվյալ դեպքում ցուցմունքներով հնարավոր չէ հաստատել ալկոհոլային հարբածության աստիճանը և ըստ այդմ որոշել՝ արդյոք այն նպաստել է ենթադրյալ արարքի կատարմանը, թե ոչ: (...)»⁶:

Փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածության և դրա նախասկիզբը համարվող փորձաքննությունների նշանակման, ապա կատարման ընթացքում, ի թիվս այլնի («inter alia»), առանցքային նշանակություն ունի նաև դրանց հետ առնչվող սուբյեկտային կազմի և վերջիններիս լիազորությունների սահմանումը, որի ինստիտուցիոնալ նշանակությունը ենթակա է դիտարկման տարբեր ասպեկտներով:

Այսպես.

«Հ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 247-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փորձաքննություն նշանակելիս և կատարելիս կասկածյալը, մեղադրյալը և տուժողն իրավունք ունեն՝

1) մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանում. այդ մասին կազմվում է արձանագրություն.

2) բացարկ հայտնել փորձագետին.

3) միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից.

4) փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն.

5) փորձագետին առաջադրել լրացուցիչ հարցեր.

6) քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը.

7) բացատրություններ տալ փորձագետին.

8) քննիչի կողմից փորձագետի եզրակացությունը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը.

9) մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետի հարցաքննությանը:

2. Թվարկված իրավունքներից օգտվում է նաև այն անձը, ում նկատմամբ

⁶ Տես ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴ/0003/01/19 որոշումը:

պետք է լուծվի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հարցը, եթե դա թույլ է տալիս նրա հոգեկան վիճակը»:

Մեջբերված իրավանորմով, ըստ էության, սպառիչ սահմանված են այն սուբյեկտների և գործողությունների շրջանակը, որոնցով հնարավորություն է ընձեռնվում որոշակի իրավաչափ միջամտություն ցուցաբերել փորձաքննությունների ինչպես նշանակման, այնպես էլ անցկացման փուլերում, որի շրջանակն էլ կադապարված է հենց տվյալ ցանկով, քանի որ տվյալ պարագայում գործում է «expressio unius» հանրաճանաչ սկզբունքը, ըստ որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, ինչն էլ մեր կարծիքով չի կարող ապահովել դրա բուն նպատակային օբյեկտիվ ու արդար կենսագործումը և որոշակիորեն ենթակա է լրամշակման ստորև ներկայացվող պատճառաբանություններով.

1) Փորձաքննությունների անցկացման ինստիտուցիոնալ կարգավորումները հարաբերակցելով քրեական գործի հարուցման հարցի բաղադրիչը հանդիսացող՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը սահմանող՝ Օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի հետ՝ տեսնում ենք, որ քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարարությունը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում հնարավոր որոշակի գործողությունների շարքում է նաև փորձաքննության նշանակումը: Տվյալ ժամանակահատվածում քրեադատավարական կարգավիճակ ունեցող անձի բացակայությունն ինքնին չի կարող խոչընդոտել փորձաքննությունների իրականացմանը, քանի որ դրա նկատմամբ օրինական շահեր կարող են հետապնդել այնպիսի անձինք, ինչպիսին է օրինակ՝ հաղորդում ներկայացրած կամ բերման ենթարկված անձը, որը պայմանականորեն ասած՝ ունի «փաստացի կարգավիճակ», այսինքն՝ այն անձը, որին դեռևս քրեադատավարական կարգավիճակ չի տրվում, բայց ակնհայտորեն շոշափվում են իր իրավունքներն ու օրինական շահերը: Հատկապես դեռևս համապատասխան քրեադատավարական կարգավիճակ չունեցող անձի մասով նման դիրքորոշումը, մեր կարծիքով, արդարացված է և բխում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գագիկ Միքայելյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի կայացված թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ ձևավորված դիրքորոշումներից:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ դեռևս կարգավիճակ չունեցող անձը փաստացի օժտվում է կասկածյալի քրեադատավարական կարգավիճակից, որն էլ հենց Օրենսգրքի 247-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է տվյալ հոդվածի սուբյեկտ, իսկ հաղորդում ներկայացնող անձը՝ ով կրկին որևէ կարգավիճակ չունի, այնուհանդերձ, քրեական գործի հարուցման հարցի քննարկման փուլում, նույնպես, հնարավոր է ողջամտորեն շահագրգռված լինի նշանակվող և կատարվող փորձաքննությամբ, որը պայմանավորված կարող է լինել՝ իր իսկ կողմից հաղորդած տվյալների կամ վարույթն իրականացնող մարմնի պահանջով վերջինիս կողմից տրված նյութերի կապակցությամբ նշանակվող փորձաքննության նկատմամբ որոշակի իրավաչափ շահերի առկայությամբ:

Վերևում շարադրված դիրքորոշումները բխում են նաև Մարդու իրավունք-

ների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքով ձևավորված դիրքորոշումներից, այնքանով, որքանով «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով («*Դևերն ընդդեմ Բելգիայի*» («*Deweert v. Belgium*») գործով վճիռ, 1980 թ. փետրվարի 27, գանգապ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա («*Էկլեն ընդդեմ Գերմանիայի*» («*Eckle v. Germany*») գործով վճիռ, 1982 թ. հուլիսի 15, գանգապ թիվ 8130/78, կետ 73, «Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի» («*Šubinski v. Slovenia*») գործով վճիռ, 2007 թ. հունվարի 18, գանգապ թիվ 19611/04, կետ 62, «Գ. Կ.-ն ընդդեմ Լեհաստանի» («*G.K. v. Poland*») գործով վճիռ, 2004 թ. հունվարի 20, գանգապ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում, մինչդարձական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով («*Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի*» («*Shabelnik v. Ukraine*») գործով վճիռ, 2009 թ. փետրվարի 19, գանգապ թիվ 16404/03, կետ 52): Այսինքն՝ անձի քրեադատավարական կարգավիճակի բացակայությունը դեռևս չի նշանակում, որ վերջինը՝ քրեական վարույթում զրկված է որոշակի լիազորությունների իրացումից:

2) Փորձաքննությունների նշանակման և կատարման հետ կապված մյուս հիմնահարցը վերաբերվում է պաշտպանի կողմից իրականացվող իրավաբանական օգնության ապահովման և խնդրո առարկա Օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված կանոնների հարաբերակցությանը:

Այսպես՝ Օրենսգրքի 73-րդ հոդվածով՝ մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները պարզելու, նրանց օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար պաշտպանին՝ Օրենսգրքով ի թիվս այլնի («*inter alia*») տրվել են՝ բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցելու, պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը մասնակցելու, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը, քրեական գործով նյութեր ձեռք բերելու, դրանք քրեական գործին կցելու ներկայացնելու և հետազոտելու համար միջնորդություններ հարուցելու և այլ լիազորություններ, որոնք սպառիչ չեն քանի որ պաշտպանը, որը հանդիսանում է փաստաբան, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ուժով իրավունք ունի ցույց տալու օրենքով չարգելված իրավաբանական ցանկացած օգնություն, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 6-րդ

⁷ Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22%5D%7D-17.10.2019> (սույն աշխատությամբ մեջբերված ՄԻԵԴ բոլոր որոշումները վերցված են նույն աղբյուրից):

հողվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նախորդ պարբերությամբ վկայակոչված հատուկ կարգավորումների համատեքստում հատկանշական է, որ քրեական հետապնդման մարմնի կողմից պաշտպանի միջնորդությամբ իրականացվող փորձաքննության նշանակման և անցկացման ընթացքում պաշտպանի ներգրավվածությունը չի կարող և չպետք է կաղապարված լինի քրեական հետապնդման մարմնի հայեցողությամբ, ինչի կապակցությամբ էլ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ դրանում ամրագրված՝ «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ» և «եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը» ձևակերպումների մասով ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին և 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող և անվավեր⁸, որն էլ պաշտպանական կողմի, հետևապես նաև մրցակցային դատավարության արդյունավետության համատեքստում՝ փաստորեն ենթադրեց, ի թիվս այլնի, նաև սույն աշխատության հետազոտման առարկա հանդիսացող՝ փորձաքննությունների նշանակման և կատարման ընթացքում նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն:

Փորձաքննության նշանակմանը և իրականացմանը՝ դատավարությանը մասնակցող անձանց կողմից առնչվելու՝ կարևորության, դրա՝ որպես դատավարությունում մրցակցության ապահովման բաղադրատարր հանդիսանալու մասին ներպետական դոկտրինայում, արտահայտվել է հետևյալ տեսակետը.

«(...) [Պ] ետք է խոսել ոչ թե փորձաքննության մրցակցության, այլև՝ քրեական դատավարությանը մասնակցող կողմերի մրցակցության մասին: Դրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ փորձաքննության իրականացման ժամանակ կիրառվող մրցակցության սկզբունքի հանդեպ դրական վերաբերմունքը կնպաստի դատավարության բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքի անշեղ իրականացմանը: (...)»⁹:

Վերոշարադրյալի համատեքստում հետաքրքրաշարժ են նաև այն դեպքերը, երբ փորձագետը՝ սեփական նախաձեռնությամբ («proprio motu»)՝ իր մասնագիտական հմտությունների, փորձի հիման վրա առաջ է քաշում սեփական հարցեր և լուծում դրանք, այլ խոսքով՝ փորձագետի հայեցողության շրջանակի հարաբերակցությունը մրցակցային դատավարության սկզբունքին, այսինքն՝ փորձագետի կողմից սեփական նախաձեռնողականությունը, արդյո՞ք կարող է շոշափել կողմերի իրավունքներն ու օրինական շահերը, թե՛ ոչ:

Տեսաբանների մոտեցումները վերոգրյալի կապակցությամբ տարբեր են:

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ՍԴԴ-1119 որոշումը:

⁹ Տե՛ս Վ. Ենգիբարյան, «Առանձին քննչական գործողությունների կատարման տեկտիկա», Երևան, 2018, էջեր 620-621;

Պ. Ֆ. Տելնովը, քննադատաբար մոտենալով տվյալ մոտեցմանը՝ պատճառաբանելով, որ հարցեր առաջադրելու հնարավորությամբ օժտված է բացառապես այն նախաձեռնող անձին, ինչպես նաև այդպես՝ մեղադրյալին վերապահված՝ փորձագետին առաջադրված հարցերին ծանոթանալու և լրացուցիչ հարցեր առաջադրելու իրավունքը կարող է խախտվել¹⁰:

Ի. Լ. Պետրովսիինի կարծիքով փորձագետի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ հայտնաբերելիս, որոնք դուրս գալիս իրեն առաջադրված հարցերի շրջանակից, փորձագետը կարող է այդ մասին հայտնել փորձաքննությունը նախաձեռնողին՝ որոշման մեջ համապատասխան հարցերը ներառելու և դատավարության մասնակիցներին ծանոթացնելու համար¹¹:

Ներպետական դոկտրինայում՝ Վ. Գ. Ենգիբարյանի կողմից արտահայտվել է հետևյալ տեսակետը. (...) *[Փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշում է պարունակվում փորձագետի համար առ այն, որ վերջինս պատասխանի այդ թվում նաև հետազոտության ընթացքում առաջացող լրացուցիչ հարցերին, և այդ որոշմանը մեղադրյալը և դատավարական օրենսդրությամբ այդ իրավունքից օգտվող այլ անձինք ծանոթացվում են, այսինքն՝ նախապես տեղեկացվում են փորձագիտական նախաձեռնությամբ առաջադրվող հարցերի հնարավորության մասին, հետևաբար, անհրաժեշտության դեպքում վերը շարադրված կարգով (լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն կատարելու միջնորդությամբ) կարող են միջոցներ ձեռնարկել, եթե գտնեն, որ փորձագետին կարելի էր առաջադրել այլ հարցեր: Միևնույն ժամանակ, որպես կանոն, սկզբնական փորձաքննությունը, որպես անհետաձգելի սկզբնական քննչական գործողություն նշանակվում է քննության դեռևս վաղ փուլում, անգամ մինչև քրեական գործ հարուցելը, երբ հնարավոր է, որ կասկածյալը կամ մեղադրյալը դեռևս չեն հայտնաբերվել կամ գտնվում են հետախուզման մեջ (...)*¹²:

Դատավարության մասնակիցներին առաջադրված հարցերի հասանելիությունն ապահովելու մասով՝ համաձայն լինելով հեղինակների վերոմեջբերված՝ տեսակետների հետ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ արդարացված է ներպետական դոկտրինը, քանզի հանրային ռեսուրսների խնայողության, դատավարական պրոցեսում ավելորդ ֆորմալիզմից խուսափելու և վերջապես՝ փորձագետի եզրակացության՝ ապացուցողական արժեքի ու գիտականության բարձրացման նպատակով՝ առավել ընդունելի կլինի այն մոտեցումը, որ փորձագետն ազատ լինի, անգամ իմպերատիվ կերպով ունենա պարտականություն՝ հետազոտության սեփական նախաձեռնությամբ՝ իր իրավասությունների շրջանակներում՝ կատարվող փորձաքննության ընթացքում առաջ քաշել դրա հետ ուղղակիորեն կապված հարցեր, որոնք նախաձեռնող մարմինը չի առաջադրել, սակայն կարող են ունենալ էական նշանակություն և պատասխանել դրանց: Ինչ վերաբերվում

¹⁰ Տե՛ս Тельнов П.Ф., процессуальные вопросы судебной экспертизы (пособие для экспертов), ЦНИИСЭ, М., 1967, էջ 23:

¹¹ Տե՛ս Петрухин И.Л., Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 111:

¹² Տե՛ս Վ. Ենգիբարյան, «Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա», Երևան, 2018, էջ 624:

է փորձագետի բարձրացված հարցերի, հետևապես նաև տրված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում դրա դեմ «հակազդման մեխանիզմներին», ապա՝ ի շնորհիվ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն պահանջելու իրավունքի կիրառման շահագրգիռ անձն օժտված է բավարար գործիքակազմով: Ավելին, փորձագետի կողմից սեփական հարցերի առաջադրումը կարող է գործել հենց ի նպաստ հենց դրա հետ ուղղակիորեն առնչվող անձի, քանզի այն անցկացնելիս հայտնի դարձած հանգամանքների մասին վարույթն իրականացնող մարմինը կարող էր չհիմանալ, հետևապես նաև համապատասխան հարց չներառեր այդ մասին, բացի այդ՝ ինչպես նշվեց վերոմեջբերվածում՝ հնարավոր են դեպքեր, երբ կասկածյալ կամ մեղադրյալը դեռևս հայտնաբերված չլինեն կամ գտնվեն հետախուզման մեջ:

Սեփական նախաձեռնությամբ հարցեր առաջ քաշելու վերաբերյալ՝ Նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանվել է, որ փորձագետը պարտավոր է եզրակացություն կամ կարծիք տալ ոչ միայն իրեն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով:

Հարկ է նշել, որ, բացի մեղադրյալի և կասկածյալի կարգավիճակ ունեցող անձանցից, սույն պարբերության դրույթները վերաբերվում են նաև այլ՝ ցանկացած այն անձանց նկատմամբ, որոնք այս կամ այն կերպ կարող են առնչվել նշանակվող և կատարվող փորձաքննությանը, ինչի մասին առավել մանրամասն կներկայացվի ստորև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված դիրքորոշումների համաձայն՝ պաշտպանության կողմը պետք է ունենա, որպես այդպիսին, ոչ միայն փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելու և վիճարկելու իրավունք, այլ նաև եզրակացությունները նախապատրաստողների վստահելիությունն ուղիղ հարցաքննության միջոցով վիճարկելու իրավունք (*տես, ի թիվս այլ վճիռների, «Բրանդշտեթերն ընդդեմ Ավստրիայի» («Brandstetter v. Austria»), 1991 թվականի օգոստոսի 28, շարք Ա, թիվ 211, «Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների» [«Doorson v. the Netherlands»], 1996 թվականի մարտի 26, §§ 81-82, «Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1996-II», «Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի» («Mirilashvili v. Russia»), թիվ 6293/04, § 158, 2008 թվականի դեկտեմբերի 11, և «Մալրիցինան ընդդեմ Ռուսաստանի գործը», § 177): Այսինքն՝ պաշտպանի մասնակցությունը փորձաքննությունների նշանակմանն ու անցկացմանը պետք է լինի անմիջական և ուղղակի, ինչպես գործող օրենսդրությամբ կասկածյալի, մեղադրյալի և տուժողի պարագայում է, որը կխթանի հետագայում փորձագետներին հարցաքննելու դեպքում պաշտպանական գործառույթի իրացումն ավելի նպատակային և արդյունավետ դարձնելու համար:*

Տվյալ կոնտեքստում իրատեսական է դառնում նաև տուժողի ներկայացուցչի՝ որպես տուժողի իրավունքները և օրինական շահերը ներկայացնող սուբյեկտի նախատեսումը, որի կողմից իրականացվող՝ տուժողի օրինական շահերի պաշտպանության բաղկացուցիչ մաս կարող է լինել նաև փորձաքննության նշանակման և կատարման կապակցությամբ վերջինի օրինական շահերը ներկայացնելը,

որը, ինչպես արդեն նշեցինք, պաշտպանի դեպքում, արդյունավետորեն կիրացվի տուժողի ներկայացուցչի՝ տվյալ ընթացակարգերին ուղղակիորեն մասնակցելու և դրանց նկատմամբ որոշակի իրավունքներ ունենալու հնարավորության օրենսդրական ապահովման դեպքում:

Խնդրո առարկայի վերաբերյալ օտարերկրյա տարբեր երկրների համապատասխան կարգավորումներով նախատեսված մոտեցումները տարբեր են:

Մասնավորապես՝ Ռուսաստանի քրեական դատավարության 198-րդ¹³, Բելառուսի քրեական դատավարության 229-րդ և հոդվածներով փորձաքննություն նշանակելիս և կատարելիս որոշակի իրավունքների շրջանակից օգտվող անձինք են կասկածյալը, մեղադրյալը, տուժողը, պաշտպանն ու տուժողի ներկայացուցիչը¹⁴:

Վրաստանի քրեական դատավարության 144-րդ հոդվածի օրենսդրի մոտեցման համաձայն՝ փորձաքննության կատարման նախաձեռնությամբ օժտված են դատավարության կողմերը, իսկ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության կողմ է հանդիսանում կասկածյալը, դատապարտյալը, արդարացվածը, նրանց փաստաբանը, քննիչը, դատախազը¹⁵:

Ուշագրավ է Մոլդովիայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների առանձնահատկությունները: Մասնավորապես՝ Մոլդովիայի քրեական դատավարության 142-րդ և 144-րդ հոդվածների համաձայն՝ փորձաքննությունների նշանակման և կատարման ժամանակ՝ փորձագետին հարցեր առաջադրելու, դրանց համար էական նշանակություն ունեցող նյութերի տրամադրման, դրանցով ստացված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում համապատասխան ընթացակարգով դրանք վիճարկելու իրավունքով լիազորված անձանց շրջանակը դատավարության կողմերն են, իսկ 29-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության կողմեր են հանդիսանում այն անձինք, որոնք քրեական վարույթի շրջանակում՝ հավասարակշռման սկզբունքի հիման վրա իրականացնում են պաշտպանության կամ մեղադրանքի գործառույթներ¹⁶, այսինքն՝ տվյալ մոտեցումը հանգում է վերոգրյալ՝ պայմանականորեն ասված «փաստացի կարգավիճակ ունենալու» հետ, որը դրսևորվում է նրանում, որ փորձաքննությունների նշանման և անցկացման հետ ուղղակիորեն առնչություն կարող է ունենալ փաստացի մեղադրանքի և պաշտպանության գործառույթներ իրականացնող ցանկացած անձանց, որը թեև ընդհանրական բնորոշում է, սակայն ոչ վերացական, ինչը որոշակի զուգահեռներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (այսուհետև նաև՝ Նախագիծ) առաջարկվող մոտեցման հետ, ինչը կարծում ենք, որ սույն աշխատությամբ ներկայացված հիմնահարցերի կապակցությամբ կառուցողական նշանակություն ունի՝ ստորև ներկայացվող հիմնավորումներով:

Այսպես. Նախագծի 255-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննության նշանակ-

¹³ Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/f4f64adeef35ed317d5a7790942e9a58e64fc24d/-17.10.2019թ.:

¹⁴ Տե՛ս <http://kodeksy.by/ugolovno-processualnyy-kodeks-17.10.2019թ.>

¹⁵ Տե՛ս <https://www.matsne.gov.ge/ru/document/download/90034/37/ru/pdf-17.10.2019թ.>

¹⁶ Տե՛ս http://pravo.org.ua/files/___pdf-17.10.2019թ.

ման և անցկացման ժամանակ որոշակի իրավունքներով, այդ թվում նաև գործող օրենսդրությամբ նախատեսված՝ փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելու, ինչպես նաև արդարացված կերպով որպես նորամուծություն առաջարկվող՝ փորձագետի հարցաքննության կատարման կամ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակման միջնորդելու իրավասությամբ օժտված է վարույթի այն մասնավոր մասնակիցը, իսկ 2-րդ մասի 2-րդ կետով՝ ցանկացած այն անձը, որի իրավաչափ շահերին ակնհայտորեն կարող է առնչվել փորձաքննությունը:

Համաձայն Նախագծի 6-րդ գլխի համակարգային վերլուծության՝ վարույթի մասնավոր մասնակիցներ են հանդիսանում՝ մեղադրյալը, պաշտպանը, տուժողը, մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն ճանաչված տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը տուժողի լիազոր ներկայացուցիչը և գույքային պատասխանողը: Սակայն հարկ է նշել, որ տվյալ անձանց նախատեսմամբ Նախագիծը չի կադապարել իրավակիրառին և ինչպես նշվեց վերևում, Նախագծի 255-րդ 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսվել է, որ փորձաքննության նշանակման և կատարման նկատմամբ որոշակի իրավունքներ ունեցող անձանց շրջանակի մեջ է մտնում ցանկացած այն անձը, որի իրավաչափ շահերին ակնհայտորեն առնչվում է փորձաքննությունը:

Նախագծով ամրագրված՝ փորձաքննություն նշանակելիս և կատարելիս որոշակի իրավունքներ ունեցող անձանց շրջանակի ամբողջացումը ցանկացած այն անձի նկատմամբ, որի իրավաչափ շահերին այն ակնհայտորեն առնչվում է, կարծում ենք՝ լիովին արդարացված է, քանի որ քրեադատավարական կարգավիճակ ունեցող անձանց հետ մեկտեղ իր մեջ այն կլանում է նաև այն անձանց շրջանակը, որոնք ուղղակիորեն առնչվում են փորձաքննությունների հետ:

Վերոշարադրյալի համատեքստում ներկայացնենք օրինակ. ընդունենք, թե անձի կողմից տրվում է հաղորդում և վերջինիս կողմից ներկայացվում է տեսագրություն, որտեղ երևում է առերևույթ հանցագործություն կատարող անձը, ինչից հետո այն իրավասու մարմնի կողմից ուղարկվում է փորձաքննության՝ պատկերված անձի նույնացման և այլ էական հանգամանքներ պարզելու նպատակով: Տվյալ օրինակում թե՛ հաղորդում ներկայացնող անձը, թե՛ տեսագրությունում պատկերված անձը քրեադատավարական կարգավիճակ չունենալով՝ ուղղակիորեն առնչվում են փորձաքննության նշանակման և անցկացման հետ, ինչն էլ անաչառ դիտորդի մոտ ողջամիտ հետևություն կարող է ստեղծել առ այն, որ տվյալ փորձաքննությունը կարող է շոշափել վերջիններիս իրավաչափ շահերը, այնքանով, որքանով, տվյալ օրինակում՝ հաղորդում ներկայացնող անձը թույլատրելի իրավական գործիքակազմի սահմաններում ձեռնամուխ կլինի իր կողմից ներկայացվող փաստական տվյալի կապակցությամբ նշանակված փորձաքննությամբ այն հաստատելուն միտված գործողությունների կատարմանը, իսկ դրա հետ ուղղակի կապ ունեցող անձը՝ տեսագրությունում երևացող և առերևույթ հանցագործություն ենթադրյալ կատարողը, կրկին՝ թույլատրելի միջոցներով կձգտի փաստել այլի մասին: Այլ խոսքով՝ տվյալ օրինակում կշռափվեն դեռևս քրեադատավարական կարգավիճակ չունեցող անձանց իրավաչափ շահերը, որոնց կապակցությամբ էլ վերջիններս կարող են իրացնել՝ փորձաքննու-

թյուններ նշանակելիս և կատարելիս ունեցած իրենց որոշակի իրավունքները, ուստի նման պարագայում նրանց համար անհրաժեշտ է ապահովել հավասար մրցակցային պայմաններ:

Բերված օրինակի կապակցությամբ նշենք, որ թեև ֆորմալ, մասնավորապես՝ ձևակերպման առումով փորձաքննությունների նշանակման և անցկացման ժամանակ որոշակի իրավունքներով օժտված անձանց սպառիչ և անհատապես նշված շրջանակը սահմանված չլինելն առաջին հայացքից կարող է անհստակությունների ռիսկեր ստեղծել, սակայն փորձաքննության՝ «անձի իրավաչափ շահերին առնչվելու» պայմանը, ինքնին հստակեցնում և որոշակիություն է հաղորդում փորձաքննությունների նշանակման և կատարման նկատմամբ թույլատրելի սուբյեկտների շրջանակը որոշելիս, որպիսի հատկանիշների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (*տե՛ս «Hilda hafsteinsdóttir v. Iceland» application no. 40905/98, 08.06.2004, p.56*): Բացի դրանից՝ այն բխում է նաև ՄԻԵԴ այլ դիրքորոշումներից, ըստ որոնց՝ արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ այնքան կարևոր տեղ է զբաղեցնում, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները նեղ իմաստով մեկնաբանելը որևէ կերպ չի կարող արդարացվել (*տե՛ս «Մորեյրա դե Ազեվեդոն ընդդեմ Պորտուգալիայի» [Moreira de Azevedo v. Portugal], 1990 թվականի հոկտեմբերի 23, § 66, շարք Ա, թիվ 189, և «Գրեգաչևիչն ընդդեմ Խորվաթիայի» [«Gregačević v. Croatia»], թիվ 58331/09, § 49, 2012 թվականի հուլիսի 10*), ուստի սույն աշխատության հետազոտման առարկա հանդիսացող՝ փորձաքննությունների նշանակման և կատարման նկատմամբ՝ որոշակի իրավունքներ ունեցող անձանց սպառիչ թվարկված չլինելը բխում է նաև հենց վերջին թվարկված դիրքորոշումներից, որը հնարավորություն է տալիս բովանդակային առումով անհարկի չնեղացնել տվյալ հոդվածի թիրախային կիրառումը, այն արդարացված կերպով նաև վերաբերելի դարձնելով «փաստացի կարգավիճակ» ունեցող այն անձանց նկատմամբ, ում իրավաչափ շահերին կարող է առնչվել նշանակվող և կատարվող փորձաքննությունը:

Այսպիսով՝ ի մի բերելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված՝ փորձաքննությունների նշանակման և կատարման նկատմամբ որոշակի իրավունքներ ունեցող անձանց շրջանակը, մասնավորապես սահմանված Օրենսգրքի 247-րդ հոդվածով՝ նեղացված է և ամբողջությամբ չի արտահայտում կոնվենցիոն, սահմանադրական և քրեադատավարական այն հիմնարար պահանջները, որոնք կոչված են քրեական վարույթի ընթացքում բարձրացնելու ապացուցողական գործառույթների իրականացման արդյունավետությունը, ուստի ամփոփելով աշխատանքը՝ գտնում ենք, որ գործող օրենսդրությամբ ամրագրված և սույն աշխատության առարկա հանդիսացող փորձաքննությունների նշանակման և կատարման վերաբերյալ իրավակարգավորումները՝ վերոգրյալի համատեքստում ենթակա են վերանայման:

Annotation. During appointment and execution of expertise often theoretical and practical problems occur, that institutionally refer not only to the subject of the issue, but also other criminal-procedural mechanisms. With this work an attempt was made to disclose some issues related to the appointment and execution of expertise in acting Criminal Procedure Code, the Draft of Criminal Procedure Code, relevant legal regulations of foreign countries in the context of a sustainable legal precedent, in connection of which, a number of conclusions have been made and appropriate solutions have been proposed.

Аннотация. При назначении и проведении экспертизы из институциональных аспектов предмета и иных уголовно-процессуальных механизмов часто возникают теоретические и практические вопросы. В данной статье в контексте действующего Уголовно-процессуального законодательства Республики Армения, Проекта Уголовно-процессуального кодекса, соответствующих правовых норм иностранных государств, а также на основе прецедентного права рассматриваются некоторые ключевые аспекты, касающиеся назначения и проведения экспертизы, а также сделан ряд выводов и предложены соответствующие решения.

Բանալի բառեր - փորձաքննություն, փորձագիտական եզրակացություն, թույլատրելի ապացույց, արդար դատաքննություն, քրեական գործ, իրավաբանական օգնություն, անաչառ դիտորդ:

Keywords: *expertise, expert conclusion, admissible evidence, fair trial, criminal case, legal aid, impartial observer.*

Ключевые слова: *Экспертиза, экспертное заключение, допустимые доказательства, справедливое судебное разбирательство, уголовное дело, юридическая помощь, беспристрастный наблюдатель.*

Մ. Մելիքյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ, էլ. փոստ՝ melikmelikyan1994@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 19.11.2019, տրվել է գրախոսության՝ 19.11.2019, երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 25.12.2019